



Խ. ՍԵՅՐԱՆ

(Եգիպտոսից հայրենիք վերադարձած վերջին ֆարավանով)

Վ Ե Ր Հ Ի Շ Ո Ւ Մ

Ա՛խ, ինչքան ուժգին կարոտել էի քեզ,
Զքենաղ Երևան.
Մանավանդ էսպես երբ սարերդ հագած
Սիպտակ պատմունան,
Դու բեհեզներով կարգին պնդված,
Որպես նորահարս,
Կանգնած նայելիս, այնքան նազելի
Սարերին անհաս:

Հիշո՛ւմ ես, ինչպես էն սև օրերին,
Միծաղկոտ դեմքիդ
Շղարշ մ' ունեիր, մի շղարշ սուգի.
Լացք աչքերիդ,
Մայր էիր դառել, անհույս, անպաշտպան
Որբերին բյուրավոր,
Սիրտդ բզկտված ցավեն անսահման,
Արծիվ վիրավոր:

Թոռմել էր ժպիտը վառ այտերիդ,
Ոնց տերևն աշնան,
Եվ շրթներդ դալուկ, մոր մ' գգայուն
Դուրովն անսահման,
Բառ էին փնտռում, մի բառ վսեմ, խոստն,
Որդոցդ սփոփման.
Բայց չէին գտնում, շրթներդ դողդոջուն,
Խոսքը մայրական:

Անցել են էսօր դառն, արցունքոտ
Օրերդ էն վշտաշատ,
Կորել են անհետ, որ կարծես երբե՛ք
Չե՛ն եղել, չկան,
Ու նրա փոխան ծաղկունք անթառամ,

Հակատդ են պնենլ
Պսակով փառաց, իսկ անքիվ գուսանք
Դովդդ են հյուսել:

Արցունքներդ հիմի կյանք են ստեղծել.
Ոնց արևն անմար,
Զանգվի ջրերը լույսի են փոխվել,
Որ մութ ու խավար
Անկյուններդ խոր, լինեն լուսաշող,
Սրտիդ պես պայծառ:
Իսկ դո՛ւ, նոր աշխարհ, երկինքդ շենշող
Աստղերդ անհամար:

Հիմդ ես դրել, սոցիալիստական
Կարգերով ամուր,
Կանգնել ես տեսնով վեհ ու մարտական,
Անընկճելի, կուտ,
Նայվածքդ ուղիղ դեպի ապագան,
Քայլերդ վստա՛հ,
Դեպի հաղթանակ, կամֆով վեհական,
Քայլում անվարան:

Դարձել ես հիմի անգին մի գոհար,
Հեփաբային զարդ,
Հանանչներով լի: գույներով հագար,
Մանիակ գեղազարդ:
Ապրին քեզ կերտող ձեռները շինարար
Մեր ցեղի հանճար,
Որ քեզ պարզեց օրը փրկարար:
Ազատ, կենսուրախ, քեզ կյանք անսահման,
Իմ լույս Երևան
Կեցցես հավիտյան:

